ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

նոյեմբերի 2021 թվականի № Ա
ք. Երևան

## «ՔԱՐԱՀՈՒՆՋ ՀԷԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՔԱՐԱՀՈՒՆՋ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի սեպտեմբերի 17-ի գրությամբ դիմել էր Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հանձնաժողովի 2012 թվականի մարտի 21-ի №90Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Քարահունջ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0458 լիցենզիայում (այսուհետ՝ №0458 լիցենզիա) վերակառուցման ժամանակահատված ամրագրելու նպատակով, մինչդեռ Հանձնաժողովում առկա տեղեկատվության ուսումնասիրությունից հնարավոր է ենթադրել, որ Կայանում արդեն իրականացվել են վերակառուցման աշխատանքներ,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետի համաձայն՝ Կայանի վերակառուցման այն դեպքերում, երբ կատարվելու են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն պահանջող աշխատանքներ, և որոնք հանգեցնելու են կայանի՝ լիցենզիայով ամրագրված հաշվարկային (արևային և հողմային էլեկտրակայանների դեպքում՝ տեղակայված) հզորության փոփոխության, արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայի պայմաններում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու համար դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով նույն կետում նշված փաստաթղթերը,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի հոկտեմբերի 19-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 48-րդ կետի հնարավոր խախտման փաստի

ուսումնասիրության նպատակով, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2021 թվականի հոկտեմբերի 19-ի № ԳԲ/34.1-Մ2-4/3542-2021 գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում 2021 թվականի հոկտեմբերի 27-ի №33 գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ 2021 թվականի մայիսին դիմել է հողի նշանակությունը փոխելու համար և զուգահեռ, ելնելով գործի հրատապությունից (հողատարածքը և կատարվող աշխատանքները գտնվում են անմիջապես սահմանին մոտ), կատարվել են նախագծային աշխատանքները, ստացել է ջրօգտագործման թույլտվությունը: Տեղյակ պահելով համայնքապետարանին՝ սկսել են շինարարական աշխատանքները և հողի նշանակությունը փոխելուց հետո ամբողջական փաթեթով դիմել են Հանձնաժողով: Միաժամանակ ընկերությունը խնդրել է հաշվի առնել հետպատերազմական ժամանակաշրջանում ստեղծված խառնաշփոթ իրավիճակը և ներողամիտ լինել ուշացումով դիմելու համար:

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 48-րդ կետի պահանջը, քանի որ մինչ Հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 21-ի №379Ա որոշմամբ №0458 լիցենզիայի պայմաններում վերակառուցման ժամանակահատված ամրագրելը՝ Կայանում սահմանազատման կետերն արդեն իսկ փոխվել են և Կայանը արտադրել է էլեկտրական էներգիա,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարգի 48-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
նոյեմբերի 2021թ.